COVID-19 Թեստավորում Կալիֆորնիայում – Ինչ է ձեզ հարկավոր իմանալ

Թեստավորվեք տանը և ապահով պահեք ձեր ընկերներին, ընտանիքին և համայնքին:

Ե՞րբ պետք է թեստավորվեմ COVID-19-ի համար:

1. **Եթե դուք ունեք COVID-19-ի որևէ ախտանիշ,**
   - Անմիջապես թեստավորվեք՝ անկախ ձեր՝ COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակից:
   - Եթե ձեր թեստը բացասական է, բայց դուք շարունակում եք ախտանշաններ ունենալ, ապա նորից փորձեք 24-48 ժամ հետո: Վաղ շրջանում թեստը կարող է չգրանցել վիրուսի ցածր քանակությունը, և թեստը կարող է դրական լինել մի քանի օր անց:
2. **Եթե դուք սերտորեն առնչվել եք COVID-19-ով որևէ մեկի հետ,**
   - Թեստավորվեք, երբ ծանուցվում է շփման մասին և 3-5 օր հետո, նույնիսկ եթե ախտանիշներ չունեք:
   - Անմիջապես թեստավորվեք, եթե ախտանիշներ ի հայտ գան:
3. **Թեստավորվեք հավաքույթներից, մեծ միջոցառումներից կամ ճամվորդությունից առաջ և 3-5 օր անց,** հատկապես, եթե դուք շփվելու եք բարձր ռիսկային մարդկանց հետ (տարեցներ, իմունային անբավարարություն ունեցողներ, չպատվաստվածներ):

Որտեղի՞ց կարող եմ տնային թեստ ստանալ:

1. Ստացեք ԱՆՎՃԱՐ թեստեր բժշկական ապահովագրությամբ ձեր տեղական դեղատանը (խանութում կամ առցանց).
   - MediCal կամ Medicare – բերեք ձեր քարտը դեղատուն:
   - Մասնավոր ապահովագրություն – կապվեք ձեր ապահովագրական ընկերության հետ անվճար թեստերի կամ փոխհատուցման համար:
2. Գնեք ձեր տեղական դեղատնից (խանութում կամ առցանց): Յուրաքանչյուր թեստի արժեքը սովորաբար կազմում է մոտ $10:

Ո՞ւր կարող եմ թեստավորվել:

Գտեք թեստավորման վայրն առցանց կամ զանգահարեք (833) 422-4255 կամ 211 համարով:

Ի՞նչ անել, եթե թեստի արդյունքը դրական է:

Դուք COVID-19 ունեք: Կապվեք բուժաշխատողի հետ՝ իմանալու, թե արդյոք իրավասու եք COVID-19 բուժումների համար՝ կանխելու ծանր ախտանիշները, հոսպիտալացումը կամ մահը: Հետևեք առաջարկություններին՝ կանխելու հիվանդությունն ուրիշներին տարածելը: Հաղորդեք ձեր դրական թեստի մասին canotify.ca.gov կայքում:

Եթե ունեք ծանր ախտանիշներ, զանգահարեք 911 կամ գնացեք մոտակա հիվանդանոց:

Ի՞նչ անել, եթե ես չեմ կարող աշխատել COVID-19-ի պատճառով:

Եթե չեք կարող աշխատել COVID-19 պատճառով կամ շփվել եք հաիվանի հետ, կարող եք Հաշմանդամության ապահովագրության (DI) հայց ներկայացնել: Եթե չեք կարող աշխատել, որովհետև հեգ եք տանում COVID-19-ով հիվան ընտանիքի անդամի համար, կարող եք Վճարովի ընտանեկան արձակուրդի (PFL) հայց ներկայացնել: Երկու հայցերն էլ պետք է ունենան բժշկական խնամքի մատակարարի նշում:

COVID-19-ը կարող է առաջացնել մրսածության, ալերգիայի կամ գրիպի նման զգացում և ներառում է հետևյալ ախտանիշները.

- Տենդ կամ դողերոցք
- Հազ
- Շնչառության պակաս կամ դժվար շնչառություն
- Հոգնածություն
- Մկանի կամ մարմնի ցավ
- Գլխացավ
- Համի կամ հետի կորուստ
- Կոկորդի ցավ
- Խցանվածած կամ հոսող քիթ
- Սրտխառնոց կամ փսխում
- Փորլուծություն

Սկանավորեք QR կոդն՝ այս թռուցիկի ինտերակտիվ հղումները տեսնելու համար: